# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 03 հուլիսի 2020թ-ին կնքված N «ՎԱՔՏ-ՄԱԾՁԲ-20/2-1» ծածկագրով Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան «14» դեկտեմբերի 2020թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս գործերի կառավարիչ Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՔՍԵԼԻՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով՝ 2020 թվականի հուլիսի 03-ին կնքված «ՎԱՔՏ-ՄԱԾՁԲ-20/2-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

Պայմանագրի կողմի (ԿԱՏԱՐՈՂ) վավերապայմաններում կատարել փոփոխություն՝ ՀՎՀՀ-ն և հաշվարկային հաշիվը խմբագրել համապատասխանաբար նոր «01268617» և «2050622078521001» բովանդակությամբ:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով սահմանված Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Վարչապետի աշխատակազմ | «ԷՔՍԵԼԻՍ» ՍՊԸ |
| ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 | ք.Երևան, Արշակունյաց 2, 3-րդ հարկ, |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Ինեկոբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011023984 | Հ/Հ 2050622078521001 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 01268617 |
| -------------------- (ստորագրություն) | -------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |